ՀԱՆԳԻՍՏ
ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ՄՈՍԿՎԱՅԻ ԵՎ ՀԱՄԱՅՆ ՌՈՒՍԻԱՅԻ Տ. ԱԼԵՔՍԻ ՊԱՏՐԻԱՐՔԻ
(1877—1970)

Ռուս պրավոսլավ եկեղեցին ծանր կորուստ կրեց. ս/թ. ապրիլի 17-ին, ուրբաթ օրը, ժամը 21.40-ին, Մոսկվայում, 93 տարեկան հասակում, վախճանվեց Մոսկվայի և համայն Ռուսիայի Տ. Ալեքսի պատրիարքը:

Ռուս եկեղեցու պետի մահվան տխուր լուրը պաշտոնապես հասավ նաև ս. Էջմիածին:

Ապրիլի 20-ին տ. Ալեքսի պատրիարքի թաղման արարողությանը անձամբ ներկա գտնվելու համար Ամենայն Հայոց Հայրապետը մեկնեց Մոսկվա: Վեհափառ Հայրապետին ուղեկցում էին ս. Գեղարդի վանքի վանահայր տ. Նարեկ վրդ. Շաքարյանը և Արարատ սրկ. Գալստյանը: Օդանավակայանում Վեհափառ Հայրապետին ճանապարհելու էին եկել Մայր Աթոռի միաբանները՝ լուսարարապետ տ. Հայկազուն արքեպ. Աբրահամյանի գլխավորությամբ: Հայոց Հայրապետին ճանապարհում էր նաև ՀՍՍՀ Մինիստրների սովետին առընթեր հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահ Ս. Գասպարյանը:

Նույն օրը, ժամը 17-ին, Վեհափառ Հայրապետը հասնում է Մոսկվա, ուր նրան դիմավորում են՝ Ռուսաստանի և Հյուսիսային Կովկասի հայոց թեմի առաջնորդ տ. Պարգև եպս. Գևորգյանը, ռուս պրավոսլավ եկեղեցու ս. սինոդի անունից օդանավակայան եկած Խարկովի և Բոգոտուխովսկի թեմերի առաջնորդ տ. Լեոնտի արքեպիսկոպոսը:

Վեհափառ Հայրապետին դիմավորողների թվումն էին նաև ՍՍՀՄ Մինիստրների սովետին առընթեր կրոնական գործերի խորհրդի ներկայացուցիչ Ե. Ա. Տարասովը:

Վնուկովոյի օդանավակայանից Վեհափառ Հայրապետն ուղղակի ուղևորվում է դեպի Զագորսկի ռուսական վանքը, որը գտնվում է Մոսկվայից մոտավորապես 100 կմ հեռավորության վրա: Վեհափառ Հայրապետը առաջնորդվում է Իրեն համար միաբանական թաղում հատկացված իր հարկաբաժինը: Այնուհետև Հայոց Հայրապետին բարի գալուստ մաղթելու են գալիս ս. սինոդի անդամ, միտրոպոլիտ սրբազանները՝ գլխավորությամբ պատրիարքական տեղապահ տ. Պիմենի: Վեհափառ Հայրապետը խորին վիշտ է հայտնում գերաշնորհ սրբազաններին՝ հայ եկեղեցու ճշմարիտ բարեկամ Տ. Ալեքսի պատրիարքի մահվան առթիվ:

Ապա Վեհափառ Հայրապետը տ. Նիկոդիմ միտրոպոլիտի ու տ. Լեոնտի արքեպիսկոպոսի ուղեկցությամբ առաջնորդվում է ս. Աստվածածին մեծ եկեղեցի, ուր դրվել է հանգուցյալի դագաղը: Դագաղի շուրջ հոգեհանգստյան երգերն ու աղոթքները, սաղմոսների ընթերցումներն անընդմեջ շարունակվում են:

Վեհափառ Հայրապետի նախագահությամբ տեղի է ունենում հոգեհանգստյան արարողություն՝ հայկական ծեսով:

Ապրիլի 21-ին, երեքշաբթի, հանգուցյալ պատրիարքի թաղման օրն է: Դրսում ուժեղ ձյուն է մաղում, իսկ ներսում, ս. Աստվածածին եկեղեցում, պատարագում է պատրիարքական տեղապահ տ. Պիմենը՝ ընկերակցությամբ մյուս միտրոպոլիտների ու բարձրաստիճան եպիսկոպոսների: Վեհափառ Հայրապետը խորանում է, ձախակողմյան դա-

սում՝ Հռոմի Պավղոս Զ Պապի ներկայացուցիչ, կարդինալ Վիլդբրանցի հետ, համայն Վրաց պատրիարք-կաթողիկոս Եփրեմ Բ-ը, բուլղար օրթոդոքս եկեղեցու Տ. Կիրիլ պատրիարքը և մյուս պրավոսլավ եկեղեցիների պետերի ներկայացուցիչները՝ աջակողմյան դասում:

Ալեքսի երանելի Պատրիարքի լույս հոգին, այսօր կյանքից դեպի կյանք է գնում, դեպի հավերժական խաղաղության երկնային աշխարհը, որ վերապահված է բոլոր սուրբ հոգիներին: Մեծն Ալեքսի Պատրիարքը իսկապես եղավ մեծ իբրև եկեղեցու Գլուխ, իբրև ժողովրդի հոգևոր Դաստիարակ և Առաջնորդ, մեծ եղավ իբրև հայրենասեր, ռուս ժողովրդի հերոսական ոգին մարմնավորող, մանավանդ Լենինգրադի պաշարման դյուցազնական օրերին: Ալեքսի Պատրիարքը մեծ եղավ նաև իբրև աշխարհի խաղաղության համար աղոթող ու գործող Կրոնապետ, պայծառ օրինակ հանդիսանալով բոլորիս և շատ-շատերին:

Հոգեհանգստյան արարողությունից մի պահ

Ս. պատարագը շարունակվում է երեք ժամ, որից հետո սկսվում է հոգեհանգստյան արարողությունը, ապա՝ թաղման կարգը: Հոգեհանգստյան արարողությունից առաջ պատրիարքական տեղապահ սրբազանը հանդես է գալիս դամբանական ճառով:

Հոգեհանգստյան արարողության ընթացքին հանդես է գալիս նաև Վեհափառ Հայրապետը հետևյալ դամբանական ճառով.

«Երանի որ սուրբ են սրտիւք, զի նոքա զԱստուած տեսցեն»:

Սգավոր եղբայրներ,

Մոսկվայի և համայն Ռուսաստանի Պատրիարքը Նորին Սրբություն Ալեքսին, Մեր սիրեցյալ Եղբայրը ոչ ևս է, Ռուսաց մեծ Հայրապետը փառավոր կյանք ապրելուց և փառավոր գործ տեսնելուց հետո, իր աչքերը փակեց և հանգյավ ի Տեր:

Մենք երբեք չենք մոռանա Իր պայծառ հիշատակը, Իր բարի անունը և Իր մեծ վաստակը:

Այս տխուր պահին, Մենք հանուն Հայաստանյայց առաքելական եկեղեցու, ամենահարազատ զգացումներով մասնակցում ենք ռուս պրավոսլավ քույր եկեղեցու մեծ սգին և աղոթում ծնկաչոք, որ Տերը քաղցրությամբ ընդունի Ալեքսի Պատրիարքի հոգին անվախճան լույսի արքայության մեջ:

Թող հավերժ փառքով հիշատակվի Ալեքսի Պատրիարքի սուրբ անունը այնտեղ, երկնքի բարձունքներում և այստեղ՝ երկրի վրա:

Թող անսասան ու միշտ փառքի մեջ ապրի ու ծաղկի Ռուսաց պրավոսլավ մեծ եկեղեցին և իր աստվածասեր ժողովուրդը: Ամեն»:

Դամբանական են խոսում նաև կարդինալ Վիլդբրանցը, Տ. Կիրիլ պատրիարքը, Եփրեմ Բ Վրաց պատրիարք-կաթողիկոսը և ուրիշներ:

Մյուս օրը, ապրիլի 22-ին, Վեհափառ Հայրապետը օդանավով վերադառնում է Մայր Աթոռ:

Կենսագրություն Տ. Ալեքսի սրբազան պատրիարքի

Տ. Ալեքսի պատրիարքը ծնվել է 1877 թ. նոյեմբերի 9-ին Մոսկվայում, բարեպաշտ ծնողների ընտանիքում: Փոքրիկ Սերգեյը 11 տարեկան հասակում ընդունվում է Մոսկվայի Լազարյան ճեմարան, ապա անցնում

Թաղման թափորը

Դրսում դեռ շարունակվում է ձյունը: Սգավոր և հանդիսավոր հնչում են մեծ աշտարակի և մյուս եկեղեցիների զանգերի դողանջները: Ահա թափորը, խաչով ու խաչվառով, մոմերով ու բուրվառներով դուրս է գալիս բակ, եկեղեցու շուրջ և ուղղվում ս. Աստվածածին եկեղեցու ներքնահարկ մատուռը: Թաղման հոգևոր վերջին երգերը ավելի հուզիչ են և ավելի խորհրդավոր... Դագաղը դրվում է սեղանի վրա, օրհնում և ցանում են հողը, ծածկում կափարիչը և հանդիսավոր կերպով հանձնում են հողին մեծ Հայրապետի անյունը:

Ժամը 17-ին, հոգեճաշից հետո, Վեհափառ Հայրապետը հրաժեշտ է առնում և վերադառնում Մոսկվա:

Նիկոլաևյան լիցեյ, որը և ավարտում է արծաթե մեդալով:

1896 թվականից սկսած նա իր ուսումը շարունակում է Մոսկվայի համալսարանի իրավաբանական ֆակուլտետում:

1900 թ. նա Մոսկվայի հոգևոր ճեմարանի սան է և իր կյանքն ընդմիշտ կապում է ռուս պրավոսլավ եկեղեցու հետ: Չորս տարի անց նա ընդունում է կուսակրոն քահանայի աստիճան Ալեքսի անունով և նշանակվում Պսկով քաղաքի հոգևոր ճեմարանի տեսուչ և ապա Տուլայի և Նովգորոդի հոգևոր ճեմարանի վերատեսուչ:

1913 թ. ձեռնադրվում է եպիսկոպոս: Թեմական առաջնորդ է նշանակվում Տիֆլիսի թեմում:

20-ական թվականներին նա անցնում է Պետրոգրադ և արքեպիսկոպոսի աստիճանով վարում Նովգորոդի թեմը ևս: Պետք է նշել, որ հենց այս օրերից էլ Ալեքսի արքեպիսկոպոսի կյանքը կապվում է հերոսական քաղաք Լենինգրադի հետ: 1933 թ. նույն պաշտոնի վրա էր Ալեքսի սրբազանը, երբ ստանում է միտրոպոլիտի աստիճան: 1941 թ., Հայրենական մեծ պատերազմի ժամանակ, Լենինգրադի պաշարման ծանր օրերին, նա որպես քաջ ու հայրենասեր հովիվ, իր ժողովրդի հետ է, մեծ հավատով լցված դեպի հաղթանակ:

1944 թ. վախճանվում է ռուս պրավոսլավ եկեղեցու Սերգեյ պատրիարքը: Սուրբ սինոդը Լենինգրադի միտրոպոլիտ Ալեքսիին նշանակում է պատրիարքական տեղապահ:

1945 թ. փետրվարի երկուսին նա միաձայնությամբ ընտրվում է համայն Ռուսաստանի և Մոսկվայի պատրիարք:

Նվիրապետական այս բարձր պաշտոնում Ալեքսի պատրիարքը ռուս եկեղեցու նավը վարեց խաղաղ ու անվրդով 25 տարի: Նրա պատրիարքության շրջանին ռուս եկեղեցին ապրեց մեր օրերի իր հոգևոր վերազարթոնքը՝ մեծ արդյունավորությամբ:

Տ. Ալեքսի պատրիարքի գահակալության տարիներին արտագին բարեկամական կապեր հաստատվեցին Տ. Գևորգ Զ և ապա Տ. Վազգեն Ա Հայոց Հայրապետների միջև:

Տ. Ալեքսի պատրիարքը եղել է նաև խաղաղության պայքարի մեծ և անվեհեր զինվոր, ժողովուրդների և պետությունների միջև համագործակցության, արդարության, ազատության և իրավունքների դատի ջերմ պաշտպան: Այս անդաստանում նրա կատարած խաղաղասեր և հայրենանվեր գործունեությունը մեծապես կհիշվի միշտ երախտագիտությամբ:

«Յիշատակն արդարոց օրհնութեամբ եղիցի»:

ՆԱՐԵԿ ՎՐԴ. ՇԱՔԱՐՅԱՆ